

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2021Թ.-Ի 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առողջապահության բնագավառ

Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար 2021 թվականին հատկացվել է 714.7 մլն. դրամ գումար:

Իրականացվել է 50727.3 հազ. դրամի վճարովի ծառայություններ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 6967.1 հազ. դրամով:

2021 թ.-ի 1-ին կիսամյակի ընթացքում բժշկական կազմակերպություններում հաշվառվել են 131 ծնունդ, որից 2-ը ԱՀ-ից:

Պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 61 տեղից ուղեգրող հանձնաժողովների կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 32 քաղաքացի, առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 8 երեխա իրենց խնամակալների հետ:

Բժշկական կազմակերպություններում աշխատում են 411 բուժաշխատող:

Եղեգնաձորի ԲԿ-ում վերանորոգվել է ռենտգեն կաբինետը, ձեռք է բերվել նոր ռենտգեն ապարատ ՅՈՒՆԻՍԵՖ կազմակերպության աջակցությամբ:

Ս/թ. հունվարից Եղեգնաձորի ԲԿ-ում սկսել է իր աշխատանքը “Հայկական ակնաբուժության նախագիծ” բարեգործական հիմնադրամի (ՀԱՆ ԲՀ) հիմնած՝ հինգերորդ տարածաշրջանային ակնաբուժական ծառայությունը՝ Վահագն Ազլամիշյանի անվ. մարզային ակնաբուժական կենտրոնը:

Մարզում ապրիլ ամսվանից իրականացվում են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացը: Հանրային իրազեկման աշխատանքները լիարժեք կազմակերպելու և իրականացնելու նպատակով ստեղծվել է մարզպետին կից հանձնաժողով:

Սոցիալական ապահովության բնագավառ

Շտապատերազմյան իրավիճակում սոցիալական ապահովության ոլորտի նպատակն է եղել պատերազմի հետևանքով առաջացած խնդիրների լուծումը:

Հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ ՊՆ է ներկայացվել 113 զոհված զինծառայողների գործեր: <<Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը>> հատուցում է տրամադրել 100 ընտանիքների, 3 գործեր ընթացքի մեջ են: Աշխատանքները կազմակերպվել այնպես, որ զոհված զինծառայողների ընտանիքները զերծ մնան փաստաթղթերի համար տարբեր կառույցներ

այցերից և սոցիալական աշխատողները իրենք են այցելել ընտանիքներ՝ գործերը կազմելու համար:

Մարզում ունենք անհայտ կորած 14 զինծառայողներ: <<Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի>> <<Կամուրջ>> ծրագրով անհայտ կորած զինծառայողների ընտանիքները ստանում են ամսական հատուցումները: Ընտանիքներին տրամադրվել է խորհրդատվություն դատական կարգով անհայտ բացակայողի կարգավիճակ ձեռքբերելու վերաբերյալ: Մեկ Դատարանի վճռով անհայտ բացակայող ճանաչվածի գործ ներկայացրել ենք ՀՀ ՊՆ:

Այցելել ենք զոհված և անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին՝ մարզի իշխանությունների զորակցությունը հայտնելու և անհրաժեշտության դեպքում օգնելու համար: Կարիքավոր ընտանիքներին մարզպետարանի կողմից տրամադրվել է ֆինանսական աջակցություն:

Մեր հոգածության ներքո են նաև հաշմանդամ դարձած զինծառայողները: Աշխատանքներ է տարվում ՀՀ ՊՆ և <<Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ>> գործերը ներկայացնելու ուղղությամբ: Զինհաշմանդամները իրազեկվել են իրենց իրավունքների մասին և արդեն 36 գործեր ներկայացվել է ՀՀ ՊՆ: 30 զինհաշմանդամներ փոխհատուցումները արդեն ստացել են:

Պրոթեզավորման կարիք ունեցող զինծառայողների համաձայնագրերը ներկայացրել ենք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով շարունակվում է բնակարանի կարիքավոր զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների հաշվառումը: 2021 թվականին ՀՀ ՊՆ է ներկայացվել 2 զոհված զինծառայողների և 1 առաջին խմբի զինհաշմանդամի բնակարանային ապահովման գործեր:

2020թ. Սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզում հանգրվանեցին Արցախի Հանրապետությունից տեղահանված ընտանիքներ: Կազմակերպվեց նրանց բնակարանով, հագուստով, պարենային, տնտեսական, հիգիենիկ և անհրաժեշտ պարագաներով ըստ կարիքի ապահովելու գործընթացը:

Արցախ չվերադարձած ընտանիքների շրջանում իրազեկման աշխատանքներ են տարվել ՀՀ կառավարության աջակցության ծրագրերի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում խորհրդատվություն է տրամադրվել: Համակարգիչ չունեցող ընտանիքներին՝ էլեկտրոնային դիմումները լրացնելու հարցում օգնել են համայնքապետարանների սոցիալական աշխատողները:

Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովման համար ՀՀ Վայոց ձորի մարզում իրականացվել է <<Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով՝ Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովման>> 10 ծրագիր:

Հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների սոցիալական խնդիրները ևս մեր ուշադրության կենտրոնում են: Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը տնային պայմաններում ինտեգրացված առողջապահական և սոցիալական ծառայություններ է մատուցում 100 տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց:

Մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցելու համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական

դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հողվածով նախատեսված ծախսերից 387 քաղաքացիների տրամադրվել է դրամական օգնություն:

6 սոցիալապես անապահով բնակիչների հրատապ և անհետաձգելի կարիքները լուծելու նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հողվածով հատկացվել է երեք միլիոն դրամ միանվագ դրամական օգնություն:

Մարզում ստեղծվել է միասնական սոցիալական ծառայության 3 կենտրոններ: Այսուհետ քաղաքացիները մեկ պատուհանի սկզբունքով կարող են օգտվել սոցիալական ապահովության ծառայության, զբաղվածության, բժշկասոցիալական փորձաքննության և սոցիալական աջակցության ոլորտներին առնչվող ծառայություններից:

Առողջապահության և սոցիալական ապահովության

վարչության պետ՝

Վ.Ասլանյան

16.07.2021թ.